

Պ. ՍԻՄՈՆՅԱՆ

Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ՄԻ ԱՆՏԻՊ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայ մեծ լուսավորիչ Խ. Արովյանի հարուստ դրական ժառանգության մեջ պահպանվում են բաղմամբով արժեքավոր ձեռագրեր: Սրանցից առանձին ուշադրության արժանի է նրա ստվարածավալ և մեծ հետաքրքրություն ներկայացնող իր մի աշխատությունը, որը մինչև այժմ մեր լեզվարանների կողմից չի ուսումնասիրված: Վերջերս Գրականության ինստիտուտը տպագրության համար պատրաստել է այդ աշխատանքը և լույս կտեսնի մոտիկ ապագայում:

Աշխատությունը կրում է հետևյալ ընդարձակ վերնագիրը. «Նոր տեսական և գործնական բերականություն Ռուսաց վասն Հայոց հանդերձ բազում օրինակոք ի պէտս թարգմանությունն ի ռուսաց լեզուէ ի Հայկական և ի Հայկականէ ի ռուս ըստ գլխաւոր կանոնաց բերականութեան հանդերձ համառօտ քաղուածով պատմութեան ռուսաց ի Քաջ Ապովեանէ»: աշխատասիրեալ ըստ հեղինակութեան պարոն Վիլհելմի Տափէի դոքտորին աստուածաբանութեան և փիլիսոփայութեան»:

Իրրև գրքի բնաբան Արովյանը բերում է հետևյալ խոսքերը.

„Узнать язык народа, значит узнать весь ход его образования“.

Ձեռագիրը բաղկացած է 750 էջից, գրված է 22×17 չափի թղթի վրա, պահպանված է լավ և կաղմում է Խ. Արովյանի արխիվի № 27ա նյութը:

Ձեռագրին կցված է Արովյանի ձեռքով գրված գերմաներեն մի նամակ (1—5 էջ) ուղղված՝ ոմն դրաֆի, ենթադրվում է, որ այն հասցեագրած կարող է լինել ժամանակի լուսավորության մինիստրին:

Հայտնի է, որ այս աշխատանքը լուսավորության մինիստրության միջոցով ուղարկվել է կապանի համալսարան՝ հայկական ամբիոն ստանալու համար: Արովյանը հենց այդ նամակում խոսում է Տապալեի բերականության արժանիքների և իր թարգմանության նպատակի ու անհրաժեշտության մասին:

Գիրքը բաղկացած է երեք հիմնական գլուխներից, որոնք իրենց հերթին բաժանվում են մի քանի ենթագլուխների և հատվածների:

Առաջին գլուխը կոչվում է «Նոր տեսական և գործնական բերականություն ռուսաց»:

Այս բաժնի մեջ մտնում են՝ բուն բերականության գործնական մասը և ռուս ժողովրդի պատմության համառոտ շարադրանքը ըստ Գարամզինի:

Երկրորդ գլուխը վերնագրված է «Առաջին բերականական գիրք ընթերցանութեան ռուսաց յաղաղս ուսմանց կանոնաց կամ թարգմանությունն ռուսաց, օրինակաց Հայոց ըստ գլխաւոր կանոնաց բերականութեան ի Քաջ Ապովեանէ»:

Երրորդ գլուխը՝ «Նոր գիրք ընթերցանութեան ռուսաց վասն Հայոց, որ պարունակէ դարոյական առածս և խրատս, դառասպելս, առակս, աշխարհական և քաղաքական տեսությունն Ռուսաստանի, դատակերպութիւն մի դբադուածս ի դրութեանց կարամդինի ճշտիվ շեշտեալ հանդերձ թարգմանութեամբ, բառիւք և բանաբնութեամբ իրրև երրորդ մասն տեսական և գործնական բերականութեանն, որ ի Քաջ Ապովեանէ»:

Վերջին այս գլխում ամփոփված են վեց առանձին հատվածներ: Առաջին հատվածից հետո մատիտով գրված է՝ «աստ պակասեն առասպելք ռուսերեն և հայերեն»: ենթադրվում է, որ այս դիտողությունը կատարված է գրքի գրաբնիչ Բրոսսեի ձեռքով, քանի որ այն գրված է անվարժ հայերենով: Նույնպիսի դիտողություններ կան նաև գրքի սկզբի՝ բերականության բաժնում:

Աշխատության գրության տարեթիվի մասին ձեռագրի անվանաթերթի վրա հիշատակություն չկա, միայն որոշ փաստեր նկատի ունենալով, կարելի է ասել, որ այն սկսած պետք է լինի 1837 թվի վերջին և ավարտած՝ 1838 թվի սկզբներին, այն ժամանակ, երբ Արովյանն աշխատում էր Թիֆլիսի գավառական դպրոցում իրրև տեսչի պաշտոնակատար և ռուսաց լեզվի դասատու:

Իրենք մի երկու փաստ.

Առաջին. Արովյանը քերականության հայերեն առաջարանից բացի գրել է նաև ուս-
սերեն առաջարան, վերջինիս անվանաթերթի վրա Արովյանի ձեռքով գրված է՝

„Предисловие к теоретическо-практической грамматике составленной на Рус-
ском и Армянском языках по руководству Таппе учителем Х. Абовьяном“.
(Խ. Արովյանի արխ. № 27):

Քերականության առաջարանը գրել է իր ուսուցչության առաջին տարում, որից
հետո ձեռնարկել է այդ մեծածավալ աշխատանքին, ինչպես այդ ճիշտ կերպով ցույց է
տրված Խ. Արովյանի Երկերի լիակատար ժողովածուի 5-րդ հատորի ծանոթագրություն-
ներում:

Երկրորդ. Արովյանի այս աշխատության մեջ տեղ գտած ուսու ժողովրդի սլաոմու-
թյան բաժինը ավարտվում է 1837 թվի հոկտեմբերի 7-ի սլաոմական դեպքով՝ Նիկոլայ
1-ինի կովկաս այցելելու փաստով. հետևապես չէր կարող այդ ստվարածավալ դորժը թարգ-
մանվել և ավարտվել 1837 թվի հոկտեմբերից շուտ:

Բերած վկայություններից կարելի է եզրակացնել, որ քերականությունը գրել է
սկսել 1837 թվի վերջերին և ավարտել է 1838 թվի սկզբներին:

Հայտնի է, որ Արովյանի այս գրքի դրախտ է նշանակվում ակադեմիկոս Բրոսսեն,
որի կարծիքով այդ աշխատանքն իր բնույթով չի համասլատասխանում կոնկուրսի առա-
ջադրած սլահանջներին, դրա հիման վրա կազանի համալսարանի ղիբեկտորը մերժում է
նրան լզաշտոն հանձնել: Միաժամանակ Բրոսսեն հայտնել է իր կարծիքը գրքի օգտակա-
րության և կարևորության մասին: Ինչպես հայտնի է, Գիտությունների ակադեմիան
նույնպես հավանություն է տվել, որ աշխատանքը տպագրվի, բայց Թիֆլիսի ղիմնաղիայի
ուսուցչական կազմի թշնամական ղիրքի սլատճառով չի իրադործվել:

Աշխատությունը գրելիս Արովյանը նկատի է ունեցել Տապսի կազմած քերակա-
նությունը: Հայտնի է, որ Տապսեն եղել է Վիրորդի ղիմնաղիայի ոուսաց լեզվի ուսուցիչ
և գրել է ոուսերեն քերականություն: Արովյանը օգտվել է Տապսի գրքի սխտեմից և
փաստական մատերիալից, սակայն, կատարել է որոշ փոփոխություններ՝ հարմարեցնելով
այն հայ երեխաների սլահանջներին. «Անշուշտ հարկաւոր համարեցի փոփոխել ի տեղիս-
տեղիս գընթացս ձևոյ նորա, կարճեալ, որ ինչ չէր այնքան սլիտանի ազգի մերում, և
յաւելեալ՝ որ ինչ յարմար էին յատկութեանց լեզուի մերում և հանդամանաց, որոնց են-
թարկեալք են մանկունք մես ազգի» (Արովյանի արխ. № 27ա, էջ 6):

Աշխատության հայերեն առաջարանում Արովյանը խոսում է ընդհանրապես որևէ
լեզու և հատկապես ոուսաց լեզուն սովորելու մեծ նշանակության մասին՝ այն ղիտելով
ոչ միայն անձնական կրթության, այլև քաղաքական-տնտեսական միտքն ու գղաց-
մունքը զարգացնող մի ֆակտոր, որի միջոցով հայ ժողովուրդը հնարավորություն
կունենա հաղորդակից լինելու ոուս մեծ ժողովրդի լեզվին, նրա կուլտուրային, սլատմու-
թյանն ու մատենադրությանը:

Ռուսաց լեզվի կարևորության մասին հետևյալն է ասում գրքի առաջարանում,
«և որ լեզու յԱրևելեայց թէ յԱրևմտեայց կարէ այնպէս նպաստամատոյց լինել ազգի մե-
րում առաւել քան զամենայն զայս միտս, քան որչափ Ռուսացն, որոյ ոչ միայն հարկա-
վորութիւն և չքնաղութիւն նաև զլուսաւորեալ ազգս ևս ի մերումս ժամանակի նախան-
ձաւորս առնէ՝ բարդաւաճիլ ինմին, այլ մանաւանդ ըրւրազգի օգտաշահութիւնն, զորս
ազգ մեր ինքնին տեսանէ, զգայ և քաղէ որպէս ի զանազան սլաշտօնս արքունական ծա-
ռայութեան, նույնպէս ի քաղաքական կենցաղավարութիւնս» (Արովյանի արխ. № 27 էջ 1):

Մինչ այս աշխատությունը հայերի համար որպես ոուսաց լեզվի քերականության
ձեռնարկ ծառայել է Արրահամ սարկավազ Վաղարշապատեցու ղիրքը, որը տպվել է Աստ-
րախանում և հայր Մինաս Վարդապետ Բժշկյանի քերականությունը՝ տպված Վենետի-
կում՝ 1828 թվին:

Արովյանը բննադատության է ենթարկում այս հեղինակներին, նկատելով, որ առա-
ջինը միայն քերականական կանոնների և սահմանումների լոկ թարգմանությունն է՝
առանց դործնական օրինակների, իսկ երկրորդը՝ հին, հայկական տառերի աղավաղումն ու
աղճատումը՝ իտալական հնչումով ու արտասանությամբ: Այսպես օրինակ՝ փոխանակ գրե-
լու части речи—չաւսի բեյի, գրում էին ջաթի բեջի, местоимение—մեսոիմենիե—
մեսոիմենիե, причастие—պրիչասիե—փռիչասիե, наречие—նաբեյիե—նառեջիե և այլն:

Այս թյուրիմացությունը առաջանում էր այն սլատճառով, որ, նախ՝ ոուսաց լեզվում
չկա ջ, ք, ո, հնչյունները, և երկրորդ՝ այնտեղ, որտեղ պետք է գրվի պ, տ, կ, ք,
գրում էին՝ փ, ք, ֆ, պ և ընդհակառակը:

Արովյանի այս աշխատանքը մեծապես տարբերվում է վերոհիշյալ հեղինակների գրքերից, չի պարունակում լեզվի մեջ եղած չոր, հնացած, գործնականությունից գուրկ օրինակներ, այն հաղեցված է բաղաժամով ու բաղաժամաբար գործնական օրինակներով:

Մանկավարժ Արովյանը ուսուց լեզուն հայերին հեշտ սովորեցնելու նպատակով հանդես է բերել մեծ հմտություն: Քերականական չոր կանոնները համեմել է պատմություն, աշխարհագրություն, բնագիտություն, գրականություն, արվեստի և հայրենասիրություն հետ կապված բաղաժամով գործնական օրինակներով՝ նպատակ ունենալով, քերականություն հետ միաժամանակ հայ ժողովրդին տեղյակ դարձնել ուսում մեծ ժողովրդի կյանքին ու հերոսական անցյալին:

Սուսանյանին հաջորդում է բուն գործնական մասը:

Հատուկ տախտակով տալիս է ուսուց լեզվի այբուբենը. առանձին-առանձին կանգ է առնում յուրաքանչյուր տառի կիրառություն և նշանակություն վրա: Այս գլխում հետևյալ կերպ է բնորոշում ուսուց լեզուն. «լեզուն ուսուց է մինն յընդարձակագոյն և ամենահարկաւոր լեզուաց ի վերայ երկրի» (Արովյանի արխ. № 27-ում էջ 11):

Այնուհետև տալիս է ուսուց լեզվի դարգացման փուլերը:

Աշխատություն 36 էջից սկսում է «Համառոտ ծանոթութիւն բնահանուր քերականութեան և ժանտանգ լեզուին ուսուցն ենթադրութիւն: Այս հատվածում տալիս է խոսքի մասերի առանձին-առանձին նշանակությունները, ուսուց լեզվի բայերի 17 տեսակ խոնարհման, բայական վերջավորությունները, անկանոն ու միավանկ բայերի աղյուսակը. այնուհետև ուղղագրության կանոնների բացատրությունը, որով և ավարտվում է քերականական կանոնների սահմանումները:

Աշխատության առաջին գլխի երկրորդ բաժինը սկսում է 386 էջից, «Գծագրութիւն պատմութեան ուսուց՝ իւրիկ, Սինաւ և Տրովոր»:

Այս ծավալուն ենթարաժնում տալիս է ուսական պետականության կազմավորման սկիզբը և հասցնում մինչև 1830—40-ական թվականները՝ տալով պատմական խոշոր իրադրություններ, օտարերկրյա զավթիչների դեմ մղած ուս ժողովրդի հերոսական պայքարը, ժողովրդական հուզումներն ու ասպետամրությունները, դիտությունը, գրականություն, արվեստը: Հիշատակում է ուս նշանավոր դեմքեր Լիմոնոսովին, Ժուկովսկուն, Կարամզինին և ուրիշներին:

Առանձին ոգևորությամբ է նկարագրում Պետրոս Մեծի քաղաքական ու տնտեսական բարեփոխումները, նրա՝ շվեդների դեմ տարած հաղթանակը:

Մեծ խանդավառությամբ է նկարագրում 1812 թվի հայրենական պատերազմը. նապոլեոնի արշավանքն անվանելով «ինքնազուլիս շարժում ինչ» և գովելով մեծ գորավարներ Բազրատիոնի ու Կուտուզովի տարած փայլուն հաղթանակները Բորոգինոյի ճակատամարտում:

Բաժինը փակվում է ուսուց գործերի կողմից Հայաստանը դրավելու համար մղված մարտերի և փայլուն հաղթանակի նկարագրությամբ:

Գրքի երկրորդ գլխում Արովյանը բացատրում է ուսուց լեզվի խոսքի մասերն առանձին-առանձին՝ առանց հայերեն թարգմանություն:

Աշխատության երրորդ գլուխն ունի մի քանի հետաքրքիր հատվածներ, որոնցից առանձին ուշադրության արժանի են ուս գրականությունից վերցրած առակներն ու առասպելները, ինչպես օրինակ՝ «Գայլն ու գառը», «Պորամանկ աղվեսը», «Շինականն ու ակնոցը», «Փիղն ու գերձակը» և այլն:

Արովյանը տալիս է դիտելիքներ Ռուսաստանի աշխարհագրության և բնական հարստությունների մասին, ուսական հսկայածավալ կայսրության սահմանները, օվկիանոսները, ծովերը, ծոցերը, գետերը, լճերը, լեռները, քաղաքները, աշխարհագրական դիրքը, դրաված տարածությունը, պետական կառավարման ձևը, բնակչության գրագիտությունը, բնական հարստությունները և արտահանված մթերքների տեսակները:

Գրքի վերջին էջերում Արովյանը կցում է ուսերենում, դերմաներենում և ֆրանսերենում եղած մի շարք բառերի համեմատական տեքստը և ցույց տալիս նրանց միատեսակ նշանակությունը այդ լեզուներում: Օրինակ է բերում թվական անուններից, դերանուններից և բաղաժամով դոյական անուններ:

Ի մի բերելով քերականության մեջ շարադրված լեզվագիտական ու պատմական բոլոր փաստերն ու բացատրությունները, կարելի է ասել, որ Արովյանը թերևս հայ առաջին մանկավարժն է՝ եղել, որ նպատակ է ունեցել հայ ժողովրդին հիմնավոր կերպով սովորեցնել ուսուց լեզուն, նրա սեփականությունը դարձնել ուս մեծ ժողովրդի դարավոր պատմությունն ու գրականությունը: